

## ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հին-Նախիջեանի նպաստամատոյց մասնւթողովի նա-  
շիւները — Կազմեց փոխանորդ Լեւոն վարդապետ, Վա-  
րաբապատ, 1907

Այս գրքոյիւ միայն պարզ հաշիւ չէ, այլ և մեր կեննքի  
մի բեկորը իւր խաւար և պայծառ կողմերով: Ան կողմից մար-  
դու հողին հրճուանքով լցուում է, թէ ինչպէս հայ ժողովուրդը  
իւր հեռուար գաղութներէց սկսած լիսուսա օգնութեան ձեռք  
է մեկնում Հայ Թուրքական ընդհարումների գծախա զոհերին՝  
Նախիջեանի և նորա շրջակայ գիւղերին՝ փողով, ցորենով,  
հազուստով, երկրագործական գործիքներով, եղներով ևլն.,  
միւս կողմից շատ ցայտուն կերպով մեր առաջ պատկերանում  
է հայ գիւղացին, քաղաքացին, ինտելիգենտը, նոյն իսկ վերար-  
կուի տակ պատապարտած անքարեխիղճ հոգևորականը իրենց  
չահանէր, նախանձոտ, անքարոյական յատկութիւններով:

Կարդացէք եր. 24 «Նուիրատուութեան գործի հետ կա-  
պուած դժուարութիւնները» վերնագրով գլուխը և տեսէք, թէ  
ինչպէս հարուստ հայ գիւղացին ամէն տեսակ դժուարութիւն-  
ներ է յարուցանում, նոյն իսկ աղքատ գրացուն սովի մատնե-  
լու շափ, որպէս զի ինքն էլ մի քանի կուպէկ նպաստ ստանայ  
ի հաշիւ աղքատներին բերուած նուէրներից: Նոր գիւղի ամ-  
բողջ հասարակութիւնը պահանջ է դնում «բաժանել բոլորին  
կամ ոչ որին» եր. 25: Ի դուր են անցնում հեղինակ վարդապետ-  
տի յորդորները Շուռոթեցիներին՝ բերած նպաստը՝ 267ր 80 կ.  
բաժանել միայն աղքատներին. ժողովուրդը որոշում է «այդ  
գումարը բաժանել ամբողջ գիւղին, թէև ամէն մէկին մի մի  
կոպէկ հասնելու չին»: Շարունակեցէք կարգալ և կտեսնէք,  
որ նպաստ չստացողը, թէև անկարօտ, նգովք է թափում և  
նուիրատուի և բաժանողի գլխին և չի ցանկանում, որ իրենց  
գիւղն այլ ևս նպաստ մանի, որովհետև ինքը բաժին չէ ստանալ:  
Նրանք ստիպում են նոյն իսկ հարուստ մեղիքին ևս բաժին ստա-  
նալ, որպէս զի նրա հրաժարուելով՝ իրենք չզրկուին: Վերին—Ու-  
զունօրացի «սովից ջուր գարձած» թշուառներն ստիպուած են  
հրաժարուել իրենց առաջարկուած ալիւրից, վախենալով, թէ  
չստացող համագիւղացիք կյստիշտակեն, «կուլ կծագի» կամ «ա-

րիւնհեղութիւն» կլինի Իսկ եր. 30 նկարագրուած ընտրոշ տեսարանը ընթերցողի մէջ ուղղակի զայրոյթ է յառաջացնում:

Բայց ոչ պակաս տխուր գոյներով է ներկայանում և քաղաքացին եր. 31, «Homo—Sam» թղթակիցը (եր. 32) «Ժամանակ» լրագրի մէջ, գիւղացի վէրիւնները կամ հաւատարմատարները, որոնք զրգուում են ժողովրդին նպաստամատոյց մասնաժողովի և նորա նախագահի դէմ, սուտ հեռագիրներ խփում Կաթուղիկոսին, կեղրոնական նպաստամատոյց Յանձնաժողովին:

Չարհուրելի է յատկապէս գրքի «Վերջաբան»-ը, ուր մերկապարանոց երևում է նախկին Թովմա վարդապետի և իւր ինտելիգենտ ընկերներին ակնյայտի անհաւատարմութիւնը: Սրանք արդէն ագէտ գիւղացիներ չեն, հովուի անուան տակ թագնուած մի անբարեխիղճ, և քաղաքի յայտնի անձնաւորութիւններ: Բացի նախկին Թովմա վարդապետ և այժմ աշխարհական Տիգրան Բաղդասարեանից այս անմաքուր գործի հետ կապուած են Ղազար և Արսէն Բաղալեաններ, (որոնք աղէտից առաջ հազիւ հազ ապրելու հնարաւորութիւն են ունեցել. իսկ աղէտից յետոյ սկսել են ընդարձակ չափով իրենց կենցաղավարութիւնը ճոխացնել: Գերատիմ Սայեադեան, որ Խալխալ գիւղին հասանելիք 2000 ըուրլին իւր մօտ է պահել մի տարի և ալիւրի առւտուր սկսել եր. 100, տիկին Մելիքեան և ինչ: Սրանց հաշիւները քննուած է մի քանի անգամ, բայց անկարելի է եղել որոշել ստացուած նուերների և բաշխումների ճիշտ քանակը՝ մատեաններ և թղթեր չգտնուելու պատճառով: Հայր Լեոնը Տիգրան Բաղդասարեանի (Թովմա վարդապետի) «Մշակի» մէջ 1906 թ. № 215 տպած հաշիւներից չծախսուած գումար է ցոյց տալիս 25, 402ր. 75կ. օ, իսկ իւր հաւաքած տեղեկութիւններով վերոյիշեալ հաշուից դուրս՝ Թովմա վարդապետին ուղարկուած է դարձեալ 30847 ռ. 85 կ., զրամ և ցորեն, ուրոնք ել ու մուտք չեն գրուած, ընդամենը՝ ուրեմն 56251 ռ. 60 կ.: Այստեղ հաշուած չեն հագուստեղէն, ճոթեղէն, երկրագործական գործիքներ և ինչ, որոնց մի մասը գաղուած է եղել և միայն պատահաբար գտնուել է մասնաժողովի անդամներից մէկի ձեռքով: Հեղինակի բուռն և արդար զայրոյթը նախկին վարդապետի և իւր ընկերների դէմ շատ հասկանալի է:

«Վերջաբանի» մէջ շօշափուած երկրորդ խնդիրը, եղների գնման գործն է: Այստեղ ևս նոյն անհաւատարմութիւնը: Այս նպատակի համար յատկացուած է եղել 31000 ռ., որից գիւղերին 29,640 ռ., եղներ և սերմացու գնելու համար: Բայց հին մասնաժողովի անդամներից ոմանք ամիսներով և տարով պահում են գիւղացիներին հասանելիք մեծաքանակ գումաները,

կամ տալիս են այնպիսի անպիտան եղներ, որ գիւղացիք հրա-  
 ժարւում են ընդունել: Սպառնալիքը, ուժը լռեցնում է նրանց  
 և ստիպում համակերպուելու մասնաժողովի ցանկութիւններին.  
 դժուար չէ դուշակել, թէ ի՛նչ ոյժ էր այդ:

Միակ միւթարական ճշգութիւնը հաշիւներէ կողմից նկա-  
 տելի է Տ. Լևոն վարդապետի նախագահութեամբ կազմուած  
 մասնաժողովի գործունէութեան մէջ 1906 թ. մայիսից—1907 թ.  
 սեպտ. : Այս մասնաժողովը 8 անգամ հաշիւ է տուել Կեդրո-  
 նական նպաստամատոյց Յանձնաժողովին, ապա նախիջևանում  
 քննել է փաստաթղթերի հետ Յանձնաժողովի ներկայացուցիչ  
 պ. Արամ Տ. Գրիգորեան: Այս մասնաժողովի ձեռքով ծախ-  
 սուել է 28950 ը. 60 կ., որի մանրամասն հաշիւը դրուած է  
 մեր առաջ հարկաւոր բացատրութիւններով:

Գ.

Քարգէն վարդապետ « Կաթուղիկոսական ընտրութիւն եւ  
 կանոններ » Վարդաբապատ 1908. գիցն է 40 կոպէկ:

Վերնագիրը ցոյց է տալիս գրքի էական բովանդակու-  
 թիւնը. Կաթուղիկոսական ընտրութիւն և կանոններ: Որքան էլ  
 նորելուկներ գոռան, գոչեն, հայ ժողովուրդը դեռ մնում է  
 հաւատարիմ իւր ազգային եկեղեցուն, որ զրկուելով իւր հո-  
 վուից, ինչպէս գրքի ճակատին Խորենացու ողբից առած պատ-  
 շաճաւոր բնաբանից երևում է, բնականաբար կը հետաքրքրուի  
 իւր ապագայ հովուի ընտրութեամբ:

Ուրտի մի սիրուն գործ է կատարել Հ. Քարգէնը ամիո-  
 փելով հայրապետական ընտրութեան կանոնները իւր յարակից  
 խնդիրներով: Գրքոյկիս բովանդակութիւնն է Տեղակալ կար-  
 գելը, Կաթուղիկոսի ընտրութեան ժամանակը որոշելը, պատ-  
 գամաւոր ընտրող բոլոր թեմերը անուն անուն, պատգամա-  
 ւորների թիւը, Տաճկահայոց վէճն այդ մասին, թեմական պատ-  
 գամաւորների և Կաթուղիկոսի ընտրութեան կանոններ, վեր-  
 ջինս, ռուսերէն ընագրով: Գրքոյկիս համարեա վերջին կէտը  
 նուիրուած է մի շատ հետաքրքրական խնդրի «Տանկահայոց  
 մասնակցութիւնը Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան»,  
 մէջ են բերուած անտիպ վաւերագրեր, որ անցեալում փոխա-  
 նակուել են Ս. Էջմիածնի միաբանութեան, ժամանակի տեղա-  
 կալի և արժանայիշատակ Մերսէն Պատրիարք Վարժապետեանի  
 միջև: Այս խնդիրն իսկապէս արդէն լուծուել է Խրիմեանի ընտ-